

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆՀՐՄԱՇՁԲ-23/1**

ք. Երևան

«14» 11 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «ԲՈՒՐԳ-999» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ալբերտ Անանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **վերականգնողական աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված.

1.3.1 2023թ առկա ֆինանսական միջոցների շրջանակներում կատարման ենթակա աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է **30-րդ օրացուցային օրը ներառյալ:**

1.3.2 Հաջորդող տարիներին կատարման ենթակա աշխատանքները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետ) սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող **համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 600-րդ օրացուցային օրը ներառյալ:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պարավիրաբուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցողիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 (հինգ) աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության

համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 119193349 (մեկ հարյուր տասնինը միլիոն մեկ հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր քառասունինը) ՀՀ դրամ, որից 19865558 (տասնինը միլիոն ութ հարյուր վաթսուհինգ հազար հինգ հարյուր հիսունութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

2023թ համար պայմանագրի գինը կազմում է 3289265 (երեք միլիոն երկու հարյուր ութսունինը հազար երկու հարյուր վաթսուհինգ) ՀՀ դրամ, որից 548211 (հինգ հարյուր քառասունութ հազար երկու հարյուր տասնմեկ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.1.1 Պայմանագրի գնի 20 տոկոսը՝ 23838670 (քսաներեք միլիոն ութ հարյուր երեսունութ հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, որից 657853 (վեց հարյուր հիսունյոթ հազար ութ հիսուներեք) ՀՀ դրամը 2023 թվականին:

Ընդ որում կանխավճար հատկացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է շինարարության կազմակերպման աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները՝ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է տվյալ շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:¹

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:² Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

¹ Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հարկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

² Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պարասխանարկությունը *
1	Կապալառուին չունի շինարարական նյութերի արդյունահանման թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
2	Կապալառուին չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
3	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
4	Հասարակությանն իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագրի սկզբում և վերջում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
5	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
6	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
7	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
8	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ծեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
9	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
10	Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
11	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
12	Չի լրացվել աշխատանքների վարման մատյան, կազմվել ծածկված աշխատանքների փաստագրման, կարևոր կոնստրուկցիաների ընդունման միջանկյալ (սարքավորումների, համակարգերի, ցանցերի) ու փորձարկման ակտեր, անհրաժեշտության դեպքում	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

	ձևակերպել այլ շինարարական նորմերով և կանոններով նախատեսված լրացուցիչ կատարողական փաստաթղթեր:	
--	--	--

* 1. Սույն աղյուսյակում նշված պատասխանատվության միջոցները Կապալառուի նկատմամբ կարող են կիրառվել արձանագրված խախտման վերացման համար պայմանագրով նախատեսված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնողի կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում՝ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից Պատվիրատուին ներկայացված գրավոր հավաստման հիման վրա:

2. Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետի.

1) տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսից,

2) եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով կնքված այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակներում արձանագրվել է ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը,

3) եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով, և ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը ներառում է մեկից ավելի չափաբաժիններ, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ.

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակցից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված 2023 թվականին հաջորդող տարիների աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

Պայմանագիրը 2023 թվականին հաջորդող տարիների համար նախատեսված կատարման ենթակա աշխատանքների մասով լուծվում է, եթե դրանցից յուրաքանչյուրին նախորդող տարվա համար նախատեսված աշխատանքների կատարման մասով պայմանագիրը ավարտվելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում տվյալ տարվա աշխատանքների կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն

համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011036382
ՀՎՀՀ 002698732

Կ Ա Պ Ա Լ Ա Ռ ՈՒ

«ԲՈՒՐԳ-999» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Այգեստան 5-րդ փ., 6 տ.
Հեռ.՝ (+374) 91-43-55-11
Էլ. Փոստ՝ burg_999@yahoo.com
«Արմավիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010441230100
ՀՎՀՀ 01521387

Գլխավոր քարտուղար՝



Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Տնօրեն՝



Ա. Անանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Չափաբաժին 1. Վերականգնողական աշխատանքներ

(ՀՀ Արմավիրի մարզի Այգեշար համայնքի Թարգմանչաց եկեղեցու վերականգնում)

հհ	Հիմնա-վորում	Աշխատանքների անվանումը	Չ/Մ	Քանակը	Միավորի արժեքը /հազ.դրամ/	Ընդամենը /հազ.դրամ/
1	2	3	4	5	6	7
2023 թվականին նախատեսված աշխատանքներ						
Բաժին Ա. Նախապատրաստական աշխատանքներ						
1	շուկա	Հուշարձանի տարածքի խոտածածկի քանդում - հեռացում	10քմ	200	0.700	140.000
Ընդամենը						140.000
Ընդամենը փոկոսներով ամբողջի համեմատ						5.41%
Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը						5.27%
ԲԱԺԻՆ Գ. Ընդհանուր նախնական աշխատանքներ						
5	Ժ3-69	Մետաղական խողովակներից ինվենտարային արտաքին տախտակամածի կապում և քանդում	100քմ	0.35	130.000	45.500
Ընդամենը						45.500
Ընդամենը փոկոսներով ամբողջի համեմատ						1.76%
Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը						1.76%
ԲԱԺԻՆ Է. Սրբատաշ երեսապատի Կցոնման և սոսնձման աշխատանքներ						
3	ԵԺ4-51-1	Բարդ պրոֆիլավոր ճարտարապետական դետալների բարդ ուրվագծով կցոնումների կատարում	քմ	20	1.600	32.000
8	4-30-1վ կ.12	Կցոնվող բարդ ճարտ. դետալների շար	քմ	0.2	51.000	10.200
Ընդամենը						42.200
Ընդամենը փոկոսներով ամբողջի համեմատ						1.63%
Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը						1.62%
ԲԱԺԻՆ Ը. Հուշարձանապատկան բեկորների վերաշարման աշխատանքներ						
3	ԵԺ4-1-1	Հարթ երեսապատի վերաշար	քմ	1.5	17.000	25.500
30	4-30-1վ	Ուղղագիծ բարդ պրոֆիլավոր կամ ատամնավոր քիվերի քարերի վերաշար (ճակատներ, տունքաներ, թմբուկ ել.-14սմ)	քմ	0.2	68.500	13.700
Ընդամենը						39.200
Ընդամենը փոկոսներով ամբողջի համեմատ						1.52%
Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը						1.54%
ԲԱԺԻՆ ԺԱ Նոր տաշ ու շարի աշխատանքներ						
8	ԵԺ4-1-1	Հարթ երեսապատի նոր տաշ ու շար	քմ	16	61.400	982.400
46	4-30-1վ	Ուղղագիծ բարդ պրոֆիլավոր քիվերի նոր տաշ ու շար (ճակատներ և տունքաներ) ել. 10 սմ	քմ	3.6	162.000	583.200
74	Ե1-19 կ.2	Սրբատաշ երեսապատի քարերի լրացուցիչ տեղափոխում ուղղահայաց միջինը 4.5մ	տն	5.8	3.000	17.400
Ընդամենը						1583.000
Ընդամենը փոկոսներով ամբողջի համեմատ						61.22%
Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը						61.10%

ԲԱԺԻՆ ԺԲ Քանդակազարդման աշխատանքներ						
1	ԲՍՍՆ 4-83 4-45 ք	Ուղղագիծ բարդ պրոֆիլավոր քիվերի քարերի քանդակազարդում (խորությունը՝ 2.5սմ)	քղմ	144	4.500	648.000
Ընդամենը						648.000
Ընդամենը տոկոսներով ամբողջի համեմատ						25.06%
Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը						25.31%
ԲԱԺԻՆ ԺԳ Շաղախի ներարկման և լիցքի կատարման աշխատանքներ						
3	ԵԺ2-7-2	Լիցքի կատարում խամքարով և բարդ կրաշախով (լվացված ավազ)	խմ	2	44.000	88.000
Ընդամենը						88.000
Ընդամենը տոկոսներով ամբողջի համեմատ						3.40%
Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը						3.39%
Ընդամենը (2023 թ համար)						2585.900
Ընդամենը տոկոսներով (2023 թ համար)						100%
Զնախատեսված ծախսեր 6%						155.154
Ընդամենը						2741.054
ԱԱՀ 20%						548.211
Ընդամենը (2023 թ համար)						3289.265
Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում հետագա տարին նախատեսված աշխատանքներ						
հհ	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Զ/Մ	Քանակը	Միավորի արժեքը /հազ.դրամ/	Ընդամենը /հազ.դրամ/
1	2	3	4	5	6	7
Բաժին Ա. Նախապատրաստական աշխատանքներ						
1	շուկա	Հուշարձանի տարածքի խոտածածկի քանդում - հեռացում	10քմ	144.6	0.700	101.220
Ընդամենը						101.220
Ընդամենը տոկոսներով ամբողջի համեմատ						0.11%
Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը						0.11%
Բ 3, Մեծ զանգվածների սրբատաշ երեսապատի քանդում վերաշարում						
1	ԵԺ4-1-1	Հարթ երեսապատի քանդում - վերաշարում	քմ	0.8	28.300	22.640
4	4-3-1 գ-1.3	Կոր եզրագծով միակող երեսապատի քանդում վերաշարում	քմ	0.4	32.500	13.000
8	4-3-1 գ-1.3	Թմբուկի պատուհանների միջին բարդության պրոֆիլավոր հատակագծով, անկյունային միակող երեսատով քանդում վերաշարում	քմ	1.83	32.000	58.560
Ընդամենը						94.200
Ընդամենը տոկոսներով ամբողջի համեմատ						0.10%
Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը						0.10%
ԲԱԺԻՆ Գ. Ընդհանուր նախնական աշխատանքներ						
5	Ժ3-69	Մետաղական խողովակներից ինվենտարային արտաքին տախտակամածի կապում և քանդում	100քմ	0.13	130.000	16.900
6	21-2 գ-1.1	Լանջերին հենվող փայտե ոչ ինվենտարային տախտակամածի կապում և քանդում	քմ	269.9	6.600	1,781.340
7	ԵԺ21-2	Փայտե ներքին ոչ ինվենտարային տախտակամածի կապում և քանդում	քմ	11.24	6.000	67.440
9	ԵԺ21-4-3	Պատուհանների կոնական մակերևույթով կամարների տակ կավարամածների կապում	խմ	2.05	28.600	58.630

		և քանդում մինչև 4 մ բարձրության (խորաններ, ավանդատուն, թմբուկ)				
11	ԵԺ21-4-6	Կամարների տակ կավարամածերի կապում և քանդում 4 մ-ից ավել բարձրության (թմբուկակիր, խորաններ, մախախորաններ)	խմ	4.4	39.700	174.680
12	ԵԺ21-4-6	3/4 խորշերի կամարների տակ կավարամածերի կապում և քանդում 4 մ-ից ավել բարձրության	քմ	3.01	39.500	118.895
15	ԵԺ21-4-6	Գմբեթաղների տակ կավարամածերի կապում և քանդում 4 մ-ից ավել բարձրության	խմ	4.21	39.500	166.295
16	ԵԺ21-4-6	Գմբեթի տակ կավարամածերի կապում և քանդում՝ 12.5 մ-ից ավել բարձրության	խմ	16.06	34.000	546.040
Ընդամենը						2930.220
Ընդամենը փոկոսներով ամբողջի համեմատ						3.22%
Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը						3.21%
ԲԱԺԻՆ Է. Սրբատաշ երեսապատի Կցոնման և սոսնձման աշխատանքներ						
1		Հարթ, միակող, կոնական և երկկող մակերևույթով կոտրված բեկորների բարդ ուրվագծով կցոնումների կատարում	քղմ	536.34	1.000	536.340
2	ԵԺ4-50-1	Միջին բարդության ճարտարապետական դետալների բարդ ուրվագծով կցոնումների կատարում	քղմ	287.66	1.300	373.958
3	ԵԺ4-51-1	Բարդ պրոֆիլավոր ճարտարապետական դետալների բարդ ուրվագծով կցոնումների կատարում	քղմ	391.8	1.600	626.880
4	ԲՍՍՆ 4-83 4-56	Կոտրված բեկորների սոսն ձում	քմ	4.78	16.000	76.480
5	ՑՅՆՊՈ- 86 աղ.14 կ.5.1 գ- 0.4	Բարդ ուրվագծով կցոնումների համար բնաչափերի պատրաստում	քմ	18.67	14.500	270.715
6	4-3-1 կ.12	Կցոնվող պարզ բեկորների շար	քմ	5.25	17.600	92.400
7	4-22-1ա կ.12	Կցոնվող միջին բարդության ճարտ.դետալների շար	քմ	2.88	34.500	99.360
8	4-30-1վ կ.12	Կցոնվող բարդ ճարտ. դետալների շար	քմ	3.92	51.600	202.272
Ընդամենը						2278.405
Ընդամենը փոկոսներով ամբողջի համեմատ						2.50%
Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը						2.51%
ԲԱԺԻՆ Ը. Հուշարձանապատկան բեկորների վերաշարման աշխատանքներ						
3	ԵԺ4-1-1	Հարթ երեսապատի վերաշար	քմ	22.64	17.500	396.200
4	4-1-1 գ-1.3	Թեք կամ կոր եզրագծով հարթ երեսապատի վերաշար	քմ	3.61	18.800	67.868
5	ԵԺ4-3-1	Միակող երեսապատի վերաշար	քմ	3.78	23.400	88.452
6	4-3-1 գ-1.3	Կոր եզրագծով միակող երեսապատի վերաշար	քմ	0.28	22.000	6.160
7	ԵԺ4-1-1	Անկյունային հարթ երեսապատի վերաշար	քմ	29.65	20.500	607.825
8	4-1-1 գ-1.3	Կոր եզրագծով անկյունային հարթ երեսապատի վերաշար	քմ	0.62	18.800	11.656
9	ԵԺ4-3-1	Անկյունային միակող երեսապատի վերաշար	քմ	0.31	23.400	7.254
10	4-3-1 գ-1.3	Թմբուկի պատուհանների միջին բարդության պրոֆիլավոր հատակագծով անկյունային միակող երեսապատի վերաշար	քմ	8.92	24.900	222.108
15	4-30-1բ գ-1.3	Թմբուկի պարզ պրոֆիլավոր, միակող երեսով թեք կտրվող եզրագծով որմնակամարների քարերի վերաշար ել.5սմ	քմ	1.16	48.000	55.680

16	4-30-1բ գ-1.3	3/4 խորշերի լուսնակածն եզրագծով որմնակամարների քարերի վերաշար	քմ	0.11	48.000	5.280
17	4-30-1բ գ-1.3	3/4 խորշերի կոնական մակերևույթով ոլորվող երեսով որմնակամարների քարերի վերաշար	քմ	1.51	48.000	72.480
18	4-30-1բ	Կամարների քարերի վերաշար (գմբեթարդներ և նախախորաններ)	քմ	1.51	45.200	68.252
19	4-30-1բ	Թմբուկակիր կամարների մեծածավալ քարերի վերաշար	քմ	5.85	45.200	264.420
20	4-30-1բ գ-1.3	3/4 խորշերի կոնական մակերևույթով կամարների քարերի վերաշար	քմ	2.89	48.000	138.720
21	4-30-1բ գ-1.3	Պատուհանների կոնական մակերևույթով կամարների քարերի վերաշար (ճակատներ, թմբուկ)	քմ	1.09	48.000	52.320
23	4-30-1բ գ-1.3	Թմբուկի պատուհանների միջին բարդության պրոֆիլավոր, կոնական մակերևույթով, միակող երեսով կամարների քարերի վերաշար	քմ	3.12	48.000	149.760
25	4-30-1բ	3/4 խորշերի և խորանների գմբեթարդների երկկող մակերևույթով, կամարների քարերի վերաշար	քմ	1.46	48.000	70.080
26	4-30-1բ գ-1.3	Տրոմպների կոնական մակերևույթով կամարների քարերի վերաշար (ճակատային և 3/4 խորշեր)	քմ	0.4	48.000	19.200
27	4-30-1բ գ-1.3	3/4 խորշերի տրոմպների կոնական մակերևույթով կամարների կորագիծ թեք կտրվող եզրագծով քարերի վերաշար	քմ	0.5	48.000	24.000
29	4-16-1բ գ-1.3	Առագաստի շրջանածն եզրագծով տրոմպների քարերի վերաշար	քմ	2.32	34.500	80.040
30	4-30-1վ	Ուղղագիծ բարդ պրոֆիլավոր կամ ատամնավոր քիվերի քարերի վերաշար (ճակատներ, տունբաներ, թմբուկ ել.-14սմ)	քմ	2.38	68.500	163.030
31	4-30-1վ	Թմբուկի ուղղագիծ բարդ պրոֆիլավոր ատամնավոր անկյունային քիվի քարի վերաշար	քմ	0.29	68.500	19.865
32	4-30-1վ	Թմբուկատակ բարդ պրոֆիլավոր կորագիծ երեսով քիվի քարերի վերաշար ել. 11սմ	քմ	3.54	78.000	276.120
33	4-1-1 գ-1.3	Նույնի կոր եզրագծով հորիզոնական հարթ երեսի վերաշար	քմ	3.72	21.500	79.980
34	4-16-1բ գ-1.3	Թաղերի միակող քարերի վերաշար (ավանդատներ և նախախորան)	քմ	0.23	32.500	7.475
35	4-16-1բ գ-1.3	Երկկող քարերի վերաշար (գմբեթարդներ, գմբեթ)	քմ	4.66	34.500	160.770
36	4-16-1բ գ-1.3	Կոր եզրագծով երկկող քարերի վերաշար (արևմտյան խորան և առագաստ)	քմ	1.61	34.500	55.545
37	4-16-1բ գ-1.3	Առագաստի սեղանածն եզրագծով անկյունավոր երեսով քարերի վերաշար	քմ	0.19	34.500	6.555
38	4-16-1բ գ-1.3	Առագաստի սեղանածն եզրագծով ոլորվող երեսով քարերի վերաշար	քմ	0.5	34.500	17.250
39	4-16-1բ գ-1.3	Առագաստի սեղանածն և կոր եզրագծով, ոլորվող երեսով քարերի վերաշար	քմ	0.56	34.500	19.320
40	4-16-1բ գ-1.3	Առագաստի երկկողմանի կոր եզրագծով անկյունային երեսով քարերի վերաշար	քմ	0.08	34.500	2.760
41	4-16-1բ գ-1.3	Երկկողմանի կոր եզրագծով երկկող կամ ոլորվող երեսով քարերի վերաշար (առագաստ և գմբեթ)	քմ	0.33	34.500	11.385
42	4-16-1բ գ-1.3	Գմբեթի պարզ պրոֆիլավոր ջլաղեղների երկկող քարերի վերաշար	քմ	12.39	34.500	427.455
43	4-26-1ա	Խնձորակի ճարտարապետական բարդ հորինվածքով քարի վերաշար	քմ	0.25	52.500	13.125
44	ԵԺ1-19 կ.2	Սրբատաշ երեսապատի քարերի լրացուցիչ տեղափոխում ուղղահայաց ուղղությամբ միջինը 4 մ	տմ	39.49	3.000	118.470
Ընդամենը						3786.860
Ընդամենը փոկոսներով ամբողջի համեմատ						4.16%

Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը						4.18%
ԲԱԺՆ Թ. Սրբատաշ երեսապատի նախնական չոր վերաշարի աշխատանքներ						
1	4-1-1 կ.12 գ-0.5	Հարթ երեսապատի չոր վերաշար	քմ	5.26	6.200	32.612
2	4-1-1 կ.12 գ-0.5	Թեք կամ կոր եզրագծով հարթ երեսապատի չոր վերաշար	քմ	1.2	6.200	7.440
3	4-3-1 կ.12 գ-0.5	Միակոր երեսապատի չոր վերաշար	քմ	2	7.300	14.600
5	4-1-1 կ.12 գ-0.5	Անկյունային հարթ երեսապատի չոր վերաշար	քմ	3.07	6.200	19.034
6	4-1-1 կ.12 գ-0.5	Կոր եզրագծով անկյունային հարթ երեսապատի չոր վերաշար	քմ	0.62	6.200	3.844
8	4-3-1 կ.12 գ-0.5	Թմբուկի պատուհանների միջին բարդության պրոֆիլավոր հատակագծով անկյունային միակոր երեսապատի չոր վերաշար	քմ	2.23	7.300	16.279
12	4-30-1բ կ.12 գ-0.5	Թմբուկի պարզ պրոֆիլավոր, միակոր երեսով թեք կտրվող եզրագծով որմնակամարների քարերի չոր վերաշար (ել.5սմ)	քմ	0.35	16.300	5.705
13	4-30-1բ կ.12 գ-0.5	3/4 խորշերի կոնական մակերևույթով ուղղվող երեսով որմնակամարների քարերի չոր վերաշար	քմ	0.52	16.300	8.476
14	4-30-1բ կ.12 գ-0.5	Կամարների քարերի չոր վերաշար (գմբեթադրներ և նախախորաններ)	քմ	0.65	16.300	10.595
15	4-30-1բ կ.12 գ-0.5	Թմբուկակիր կամարների մեծածավալ քարերի չոր վերաշար	քմ	0.59	16.300	9.617
16	4-30-1բ կ.12 գ-0.5	3/4 խորշերի կոնական մակերևույթով կամարների քարերի չոր վերաշար	քմ	0.65	16.300	10.595
17	4-30-1բ կ.12 գ-0.5	Պատուհանների կոնական մակերևույթով կամարների քարերի չոր վերաշար (ճակատներ, թմբուկ)	քմ	0.26	16.300	4.238
18	4-30-1բ կ.12 գ-0.5	Թմբուկի պատուհանների միջին բարդության պրոֆիլավոր, կոնական մակերևույթով միակոր երեսով կամարների քարերի չոր վերաշար	քմ	0.62	16.300	10.106
22	4-16-1 կ.12 գ-0.5	Առագաստի շրջանաձև եզրագծով տրոմպների քարերի չոր վերաշար	քմ	0.46	10.900	5.014
